

3389

Հակոբյան

Լիկերանի Գրադարան

891.995

2-17

թ. - 1896.



-Պատշ" Երանցիկ Խաչատրյան

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 114.

ԸՆԿԵՐԱՍԷՐ ՎԱՀԱՆԸ

ՏԻԿ. Ս. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆԻ

Մանկական գրադարան

2004

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ռոստինեանցի:

1896

Ընկերութեան հրատարակութիւնները վաճառուած են Ընկերութեան գրասենեակում եւ գրավաճառանոցներում:

	Բ.	Գ.
1 Թաւամազ մեղու (սպառ.) { Թարգմ. օր. Ն. . .	—	40
2 Կարմիր լալտեր { Տէր-Մարկոսեան . . .	—	30
3 Մանկական երգեր, Գամառ-Քաթիպալի . . .	—	15
4 Թաւմաս եղբօր տնակը, Թարգմ. օր. Ն. Տէր-Մարկ. . .	—	45
5 Մորեխ եւ նրա ջնջելու հնարն. (սպառ.) Ն. Տ. Բ. . .	—	10
6 Նեղ եւ խոնաւ բնակարանների մասին, Հ. Առաք. . .	—	10
7 Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց (սպառ.) . . .	—	80
8 Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան . . .	—	50
9 Գամառ-Քաթ. բանաստեղծութիւններ, (սպառ.) . . .	—	50
10 Ռօբինզօնի պատմութիւն, Թարգմ. Գիւտ ք. Սեդրաք. . .	—	60
11 Ուխտաւորք, գործ Վիլհէլմ Հաուֆի, աշխ. Ռ. Պալ. . .	—	75
12 Գառնուկ եւ Լուսատանիկ, Շմիդտի, Թարգ. Նուարդի . . .	—	25
13 Սայեաթ-Նովա, ազգային երգիչ	—	5
14 Ծննդեան պատմութիւն	—	10
15 Ազաթանդեղեալ պատմութիւն	1	—
16 Գիւղական խալիֆայ, Ա. Արարատեանի	—	50
17 Վանայ սազ, Գ. Շերենցի	—	75
18 Փնջիկ, գրեց Աղէքս. Արարատեան	—	20
19 Նամուս, վէպ, գրեց Շիրվանզադէ (սպառ.)	1	—
20 Ստեփանոսի Տարօնեցու Ստոգիան Պատմ. տիեզեր.	2	—
21 Թիֆլիսեցոյ մտաւոր կեանքը, Գ. Տէր-Աղէքս.	1	50
22 Ղևոնդ պատմագիր	2	—
23 Սրբազան պատմութիւն (սպառ.) { Ս. քաջ. Սա-	—	30
24 Դասագիրք կրօնի (ուսուցչ. համ.) { հակեանի	1	75
25 Սոկրատէս, Թարգմ. օր. Թ. Ստեփոյեան (սպառ.)	—	10
26 Պատմութիւն Հայոց, Պարսոսեանի (սպառ.)	1	50
27 Ուղեցոյց գործնական շերամապաշ., Կ. Մ. Շահն.	—	40
28 Ժամանակագրութիւն Հայոց Յ. Դարդելի	1	25
29 Վարդ-Ռէսլին, Սպիրի, Թարգմ. Ի. Յ.	—	10
30 Նալ եւ Դամայեանի, Ֆ. Շմիդտի	—	20
31 Աստուած գիտէ արդարեւ ու մեղաւ. Կոմս Լ. Տօլստոյի	—	7
32 Հաւատարիմ Սափորին, Վալլտերի	—	10
33 Լինհարդ եւ Գերարուդ, Պետաւոցցի	—	25
34 Յաւելուած ի գիրս պատմութեան Աստղեան	—	20
35 Նաւի փոքրաւորը, Մ. Ռոզենհայնի, Թարգմ. Ի. Յ.	—	15
36 Ուռենց Յովսէփ, Ե. Սպիրի, Թարգմ. Ի. Յ.	—	15

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

891.995

2-17

56


№ 114.

„ՆՈՐ-ԴԱՐ“-ի
խմբագրութիւն.

ԸՆԿԵՐԱՍԷՐ ՎԱՅԱՆԸ

ՏԻԿ. Ս. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆԻ

Մանկական գրադարան



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի:

Типография М. Д. Ротинянца, Гол. пр., соб. д. № 41.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 26 Іюня 1896 года.

Անմուաց որդեակ իմ Վահան,

Ահա լրանում է երեք ամիս աչն սոսկալի օրուանից՝ երբ տիեզերքը ստեղծող ինքնակամ Աստուած չքիզճալով ինձ և չափսոսալով քո ծաղկափթիթ հասակը՝ բաժանեց մեզ միմեանցից, սև հողի բաժին դարձնելով քեզ:

Շարունակ մտածում էի, որ քո անունը չաւերժացնելու համար՝ մի որևէ փշատակ թողնէի. բայց ներիր, հոգիս, որ թէև դու չատ բանի արժանի ես՝ սակայն բացի այս իմ մտացս անարժան աշխատութիւնից ուրիշ ոչինչ չեմ կարող նուիրել քեզ:

Քո թշուառ եւ անմխիթար
Մայր:

ԸՆԿԵՐԱՍԵՐ ՎԱՋԱՆԸ

»ՆՈՐ-ԳԱՐ«-ի
Խմբագրական

Ա.

Որչափ ախորժելի և գեղեցիկ են լինում գարնանային օրերը, նոյնչափ անախորժ են լինում աշնանային օրերը: Գարնան աչն պարզ և արող արևը, որին չէր կարելի մի քանի րոպե շարունակ նայել՝ թուլացնում է իւր զօրութիւնը, և երկինքը ստէպ ստէպ պատած է լինում թանձր ամպերով ու մառախուղով և սարսափելի մրրիկը խանգարում է նորա հանգստութիւնը:

Նախկին կանաչավարդ պարտէզներին մօտենալով՝ չէ կարելի նայել առանց ցաւելու, տեսնելով, որ նոքա ամապացած են բոլոր գեղեցկութիւններից. պտուղներից զրկուած ծառերը տատանուելով առաւօտեան հովիկից զրկում են նաև իրանց վերջին դեղնած տերևներից, որոնք գլորւում են դէպի ցած և նախկին թաւիչանման կանաչի տեղը զիւլում: Հեռաւոր սարերի գագաթների վրայ երևացող ձիւնը գուշակում է,

որ շուտով, շատ շուտով ալևոր ծերունին պիտի գայ տիրէ աշխարհին:

Աշնանալին օրերից մինն էր. խիստ քամին փչում էր: Վահանը տխուր և տրտում լուսամուտի մօտ նստած՝ լիչում է գարնանալին այն զուարթ օրերը և ափսոսում է, որ նոքա անցան գնացին: Տխրում է նա լիչելով, որ այլ ևս չքալիտի կարողանալ ազատ դուրս գնալ և խաղալ:

Մի րոպէում նա ոգևորւում է. վճռում է հագնել վերնազգեստը, տաք փաթաթուել և մայրիկից իրաւունք ստանալ և դուրս գնալ: Բայց չէ՞ որ սարսափելի քամին պէտք է խանգարէ իւր խաղը, և ինքը ազատ չքալիտի կարողանալ խաղալ: Ուստի նորից նստում է իւր տեղը, և նորա տխուր դէմքի վրայ երևում է սաստիկ դժգոհութիւն, թէ ինչո՞ւ բնութիւնը այսպէս փոփոխական է ստեղծուել:

— Ինչո՞ւ ես տխուր, Վահան ջան, նկատում է նորան մայրը:

— Ի՞նչպէս չտխրեմ: Ես իմ ընկերներին ժամ նշանակեցի խաղալու. իսկ այս անպիտան քամին չէ թողնում, որ դուրս գամ, պատասխանում է տխուր ձայնով Վահանը:

— Ոչինչ, հոգիս, դորա համար մի վրդովուիր, հանգստացնում է նրան մայրը: Դու աւելի լաւ

կանես, որ ժամանակդ զուր տեղը չըկորցնես: Եթէ խաղալ չես կարող՝ գոնեայ դասերդ պատրաստիր. իսկ երբ եղանակը հանգարտի՝ այն ժամանակ կարող ես գնալ խաղալու:

Վահանը կամայ ախամայ նստում, որ նկարչութեամբ պարսպի:

— Բայց, մայրիկ ջան, խնդրում էր նա մօրը, այն ժամանակ ես սովորականից աւելի պիտի խաղամ: Ա՛խ, մայրիկ ջան, երանի՜ այն զուարթ գարնանալին օրերին, որոնք անցան գնացին: Դու երբէք չէիր արգելում մեզ դուրսը, մանուկանդ պարտէզներում ազատ խաղալ, որտեղ և գեղեցիկ փունջեր էինք կապում ես և քոյրերս: Իսկ սորանից չետո՞յ ցտիպուած ենք մեծ մասամբ տանը մնալ, երբեմն ցրտի, երբեմն քամու և երբեմն ձիւնախառն անձրևների պատճառով: Իսկ այս բոլորը ինձ չափազանց տխրեցնում է: Բայց ինչո՞ւ, մայրիկ ջան, Աստուած այսպէս է ստեղծել բնութիւնը. երբեմն գարուն, սաստիկ շոգ, իսկ երբեմն էլ ձմեռ, սաստիկ ցուրտ: Միթէ աւելի լաւ չէ՞ր լինի, որ միշտ միատեսակ գարուն լինէր:

— Պէտք է գիտենաս, հոգիս, որ Աստուած երբէք սխալ բան չէ անում: Եթէ ձմեռը չլիներ՝ գարունը այնչափ գեղեցիկ կանաչով ու ծաղիկներ

րով չի վարդարուի: Հողը ձմեռ ժամանակ հան-
գատանում է. պարարտանում է, ընդունում է իւր
մէջ ջրային հիւթը. պատրաստում է, որ գարունը
գալուն պէս ծլի և քո սիրած կանաչներն ու
ծաղիկները բուսցնէ: Այն ահագին աշնանային
ցանքերը կարիք չունին ջրուելու, թէպէտ առանց
ջրի ոչինչ չէ կարող բուսնել: Այդպիսի ցանքերը
Աստուած ինքն է ջրում՝ առատ ձիւն տալով:
Համբերութիւն ունեցիր, Վահան ջան. նորից գա-
րունը կըգաւ, և դու դարձեալ կըհաւաքես քո սի-
րած ծաղիկները:

Վահանը խօսում էր և միևնոյն ժամանակ
նկարում, շուտ շուտ լուսամուտից դուրս նայելով
և սպասելով, թէ ե՛րբ եղանակը կըլաւանայ և
մրրիկը կըհանդարտի, որ խանգարում էր իւր խա-
ղը: Բայց այդ օրը Վահանին այլ ևս չըլաջողուե-
ցաւ տանից դուրս գալ. որովհետեւ մինչև որ մըր-
րիկը հանդարտուեց՝ խաղալու ժամանակն էլ անց
կացաւ: Արդէն երեկոյ էր, թէ՛ի ժամանակ. իսկ
թէ՛ից լետոյ՝ արգելւած էր դուրսը ընկերների
հետ խաղալ: Նա ստիպուած էր մասնակից լինել
այն սեղանին, որի շուրջը տան բոլոր անդամները
հաւաքուած ընթերցանութեամբ էին պարապում,
կամ մի ուրիշ հետաքրքրական պարապմունքով:
Վահանի համար օրուայ բոլոր ժամերը որոշուած

էին, թէ ո՛ր ժամին ի՛նչ պէտք է անէր: Առաւօ-
տեան ժամը ըննին նա արդէն գրքերի պաշու-
սակը կոնսակից կախ անելով՝ գնում էր ուսուց-
չունու մօտ սովորելու, որտեղ մնում էր մինչև
ճաշելու ժամանակ: Ճաշից լետոյ խաղում էր որո-
շեալ ժամանակ. լետոյ պարտաւոր էր դասերը
պատրաստել. անուհետեւ նորից խաղալ, և այլն: Իսկ
գիշերուայ ժամը ըննին նա անպատճառ պէտք է
գնար քնելու:

Բ.

Վահան դեռ ևս ութ տարեկան չըկար, սո-
կաջն իւր արտաքին տեսքով, գեղեցկութեամբ ու
առողջ կազմուածքով տարիքից աւելի մեծ էր ե-
րևում: Նա իր լսող, աշխատասէր և սովնիւ բնու-
ւորութեամբ ամենքին սիրելի էր դարձած: Նորա
մասին գուշակում էին, որ նա ապագայում պէտք
է լինի խելացի և պիտանի անդամ ազգութեան:
Ծնողները իրանց բախտաւոր և երջանիկ էին հա-
մարում, ունենալով այնպիսի մի մխիթարիչ գա-
ւաթ: Ծանօթներն ու բարեկամները երանի էին
տալիս նոցա, որ Աստուած չնորհել էր նոցա Վա-
հանի նման անգին տղայ: Հասակաւորները մօրը
խորհուրդ էին տալիս՝ նորա վզից կախել կա-
խարդական հլուն, որպէս զի հեռու մնար վատ

աչքերից: Բայց ի հարկէ դա մի նախապաշար-
մունք էր: „Ես իմ երեխայոցս Աստուծոյ եմ յան-
ձնում, Նա լինի պահապան“, ասում էր միշտ
մայրը, աւելացնելով հաշկական մի առած. „Աս-
տուծոյ պահած գառը գայլը չի ուտի“:

Բաւական էր, որ մայրը մի որ և է պակա-
սութիւն նկատելով՝ պատուիրէր Վահանին, որ
նորանից հեռու մնայ: Վահանը խոստանում էր,
և այն էր գովական, որ ճշտութեամբ կատարում
էր իր խոստմունքը: Մի անգամ Վահանը հա-
մարձակւում է ուսուցչուհու մօտից ժամանակից
շուտ վերադառնալ, չըստաւելով ծառայի գնալուն:

— Ինչո՞ւ ժամանակից շուտ եկար և առանց
ծառայի, հարցնում է նորան մայրը:

— Ուսուցչուհիս ուրիշ տեղ պէտք է գնար և
այդ պատճառով ինձ տուն արձակեց, պատաս-
խանում է Վահանը: Նորա դէմքի ալիւլուելուց
մայրը կասկածի գնաց, որ որդին սուտ է խօսում:

Հետեւեալ օրն էլ Վահանը տեղից վեր չէր
կենում:

— Վահան ջան, վեր կաց, արդէն ուշ է, դա-
սիդ կուշանաս, ստիպում է մայրը:

— Մայրիկ ջան, այսօր տօն է և ինձ պա-
տուիրել են չըգնալ, պատասխանում է նա: Թէև
այդ օրը լիրաւի մի ինչ-որ տօն էր՝ բայց այդ

տօնը ուսումնարաններում չէր տօնւում: Ուստի մօր
կասկածը աւելի սաստկացաւ:

Ո՛վ միամիտ երեխաներ, ձեր ստախօսութիւնը
միշտ չի յաջողուի թագցնել մութ խաւարում. մի
օր կըբացուին խաւարի սև վարագոյրները, և
ձեր ստախօսութիւնը կըլայտնուի: Նոյնպէս պարզ-
ւում է Վահանի ստախօսութիւնը: Մի քանի օ-
րից լետոյ՝ զբօսանքի ժամանակ Վահանի մայրը
հանդիպում է ուսուցչուհուն:

— Անցեալ օրը Վահանը ինչո՞ւ չէր եկել սո-
վորելու, հարցնում է նա:

— Որովհետև նա ինձ համոզեց, որ դուք էիք
արձակել, պատասխանում է մայրը:

-- Ոչ, ընդհակառակը, ես այն օրը շատ սպա-
սեցի նորան, ասում է ուսուցչուհին:

Երեխայի այս տեսակ ստախօսութիւնը սաս-
տիկ վատ ազդեց մօր վրայ: Նա իրան չըկա-
րողացաւ բացատրել, թէ իր սիրելի Վահանը
ինչի՞ց ստիպուած և կամ ո՛ւմ դրդմամբ գործել
է այդ: Միև առաւօտ Վահան վեր է կենում
և նկատում է, որ մայրը իրանից սաստիկ դժգոհ
է: Սկսում է փաթաթուել, զբաղեցնել իր զուար-
ճախօսութեամբ, սակայն նկատում է, որ այս
բոլորը հաճելի չեն մօրը:

— Վահան, դարձաւ սա իւր որդուն. ես քե-

զանից երբէք չէի սպասում, որ դու կարող էիր այդպիսի մի յանցանք գործել:

— Ի՞նչ եմ արել, մայրիկ ջան, ի՞նչ յանցանքիս համար ես այդ աստիճան դժգոհ, շուարած պատասխանեց Վահանը:

— Ի՞նչպէս թէ ինչ ես արել. դու գործել ես այն յանցանքը, որ երբէք ներուելու չէ քեզ: Ես այն օրը տեսայ քո ուսուցչուն:

Վահան վերջին խօսքերը լսելով՝ իսկոյն գուշակեց թէ ի՞նչ էր մօր դժգոհութեան պատճառը: Նա այլ ևս պէտք չունէր բացատրութիւն լսելու: Նա համոզուեցաւ, որ իր ստախօսութիւնը բացուել է: Սաստիկ կարմրեցաւ, ամաչեց և խիղճը սկսեց նրան տանջել, թէ ինչո՞ւ է սուտ խօսել:

— Մի՞թէ դու չըգիտես, որ սուտ խօսելուդ համար՝ ես քեզ այլ ևս չեմ սիրի, շարունակեց մայրը, և հեռացրեց նրան իրանից:

Մօր այս տեսակ վարմունքը շատ տխրեցրեց Վահանին: Նրա մտքով իսկոյն անց կացաւ և այն, թէ ի՞նչ երեսով պէտք է երևայ ուսուցչուն, չէ՞ որ նա էլ գիտէր իր ստախօսութիւնը:

Վահան իր կեանքի մէջ դեռ առաջին անգամն էր այսպիսի մի յանցանք գործում և առաջի անգամն էր այսպիսի յանդիմանութիւն լը-

սում: Նա սաստիկ զղջաց իր արածի վրայ, արտասուքն աչքերին՝ ընկաւ մօր առաջ.

— Մայրիկ ջան, իմ անուշ մայրիկ ջան, ներիր ինձ այս անգամ. սորանից չետոյ խոստանում եմ այլ ևս կեանքիս մէջ սուտ չըխօսել: Եթէ նորից մի որ և է բան նկատեցիր՝ պատժիր ինձ ինչպէս ուզում ես:

Երեխայի այս տեսակ զղջման և աղաչանքին չէր կարելի չըհաւատալ, և նա շարժեց մայրական գուլթը:

Յետոյ իմացուեցաւ, որ նա այդ գործել է իր մի ընկերի գրգմամբ՝ նորա հետ աւելի երկար խաղալու համար:

— Տես, Վահան ջան, ասաց մայրը, հէնց դուրա համար ես քեզ իրաւունք չեմ տալիս ամեն երեխայի հետ խաղալու. որովհետեւ կան այնպիսի երեխաներ, որոնք միմեանց այդպիսի վատ օրինակներ են տալիս: Վահան, ես քեզ ներում եմ, որովհետեւ առաջի անգամն է քեզ պատահում այդպիսի բան, և յոյս ունիմ, որ ինչպէս ամեն դէպքերում մայրիկիդ խրատներին լսող ես՝ նմանապէս սորանից չետոյ այլ ևս սուտ չես խօսի: Եւ փրաւի, այս դէպքից չետոյ Վահանը ոչ միայն այլ ևս սուտ չըխօսեց, այլ եթէ ընկերներին մէջ մի վատ բան էր նկատում՝ իսկոյն նկատողութիւն

էր անում և խորհուրդ էր տալիս հեռու մնալ, ապա թէ ոչ, ասում էր, ես այլ ևս ձեզ հետ չեմ խաղալ: Մօր ուրախութիւնը անսահման էր լինում, երբ լսում էր, որ իր սիրելի Վահանը կատարում էր իր խոստմունքը և մինչև անգամ ուրիշներին էլ խրատներ էր տալիս:

Վահան առհասարակ իր լսող բնաւորութեամբ և ունեցած բոլոր յատկութիւններով մի օրինակելի տղայ էր: Նա չափից դուրս քնքոյշ և ըզգայուն բնաւորութիւն ունէր և միևնոյն ժամանակ սաստիկ աղքատասէր էր: Չէր կարելի նորա մօտ մի որբ երեխայի մասին կամ մի որ և է տխուր պատմութիւն կարդալ—իսկոյն նորա աչքերին արտասուքի կաթիլներ էին երևում:

Որբ երեխայի պատմութիւնը այն աստիճան ծանր էր թւում նորան, որ ամեն գիշեր պառկելու ժամանակ, իր սովորութեան համեմատ „Հայր մեր“ ասելուց չետոյ՝ աւելացնում էր. „Տէր Աստուած, Դու իմ հայրիկիս էլ պահիր, մայրիկիս էլ: Դու բոլոր երեխաներին էլ մեղքացիր և մի զրկեր նոցա իրանց ծնողներից“: Շատ էին աշխատում, որ Վահանի այս տեսակ զգայուն բնաւորութիւնը փոխէին, շատ պատմութիւններ կիսատ էին թողնում, չուզենալով նրան աւելի վշտացնել. սակայն անհնարին էր լինում, որովհետև բնու-

թիւնը նրան այդ տեսակ քնքոյշ էր ստեղծել: Երբ աղքատներ էր տեսնում՝ շտապում էր բոպէ առաջ օգնել նոցա:

Գ.

Վահան ամեն մի նեղութիւն պատրաստ էր յօժարութեամբ տանելու՝ ուսում ստանալու համար. միայն մի միտք տանջում էր նրան, թէ երբ լեծանայ՝ ի՞նչպէս պէտք է բաժանուի հեռանալ սիրելի ծնողներից ու գնալ օտարութեան մէջ ապրի: Զարմանում էր, թէ ի՞նչպէս ուրիշ երեխաներ կարող էին այդ անել: Քիչ ցաւ չէր ծնողների համար երեխայի այդ տեսակ բնաւորութիւնը: Քանի մեծանում էր՝ այնքան ջերմ սրտով հեռւում էր ուաման. զգում էր ուաման ծարաւ, փափագում էր բարձր ուսում ստանալու: Անհամբեր սպասում էր տարիքը լրանալուն, որ կարողանար գիմնազիա գնալ, սակայն ժամանակը շատ երկար էր թւում: Անգաղար խնդրում էր ծնողաց, որ օր առաջ իրան գիմնազիայի զգեստ ու գլխարկ հագնեն:

Ծնողները չընկառակեցան նորա ցանկութեան, և նա շատ կարճ ժամանակում պատրաստ ունէր իր ցանկացած և սիրած զգեստը, որ

կրկնապատիկ աւելի սազ էր դալիս նորա գեղեցիկ դէմքին: Վահանը այժմ փոխեց իր ընկերին: Նա իր առաջուայ ստախօս ընկերի հետ այլ ևս չէր խաղում: Բոլոր դրացի ընկերների միջից ընտրեց միայն մի քանիսին, որոնց հետ մայրիկից իրաւունք ստացաւ խաղալու: Մանաւանդ շատ սիրեց իր ընկեր Մովսէսին:

Սա մի աղքատ որբ տղայ էր, սակայն իր լաւ բնաւորութեամբ և երգելու շնորհքով շատ սիրելի դարձաւ Վահանին: Սոքա երկուսը շատ սիրում էին միասին երգել:

Իր սիրելի ընկերից Վահանը ոչինչ չէր խնայում և պատրաստ էր իր բոլոր ունեցածը հաւասար բաժանել նորա հետ: Նա չարունակ աղաչում էր մօրը.

— Մայրիկ ջան, իմ աւելորդ շորերս տուր Մովսէսին: Նա շատ աղքատ և որբ տղայ է: Նորա հագածը բոլորը կարկտնած է և կիսամաշ: Ես սորանից լետոյ՝ բացի գիմնադիպի զգեստից՝ ուրիշ տեսակ չոր չեմ ուզում հագնել: Ես իմ գրքերիս միւս պալուսակն ևս Մովսէսին պէտք է տամ:

Երեխայի այս բարի ցանկութեան չէր կարելի հակառակել: Երբ մայրը մի որևէ ուտելիք էր բաժանում երեխայոց՝ Վահան մի բաժին աւելի էր պահանջում: Նա խելոյն մտաբերում էր

իր աղքատ ընկեր Մովսէսին և մի աւելորդ բաժին նորա համար էր տանում: Առհասարակ Վահան չափից դուրս ցանկանում էր և աշխատում իր որբ ընկերին որևէ բանով օգնել:

— Գիտե՞ս, Մովսէս ջան, դարձաւ նա նորան մի անգամ: Ես չափազանց ցանկանում եմ, որ հայրիկս քեզ էլ ինձ հետ գիմնադիպ ուղարկէ: — Բայց չէ՞ որ, Վահան ջան, դորա համար ահագին ծախս է պէտք, պատասխանեց ինձ մայրիկս, երբ մի անգամ յայտնեցի նորան իմ ցանկութիւնս: Իսկ մենք չունինք այդքան միջոց: Մենք հազիւ կարող ենք քո և քույրիկիդ ուսման ծախսը հոգալ:

— Ախ, Մովսէս ջան, ո՛րքան եմ ափսոսում, որ հայրս քեզ էլ չէ կարող ինձ հետ գիմնադիպ տալ: Երբ ես մեծանամ և ունենամ սեփական փողեր, գիտե՞ս, ինչե՛ր պէտք է անեմ: Դեռ քեզ պէս որբ երեխայոց քանիսի՛ն կուղարկեմ գիմնադիպ. ի՛նչքան աղքատ երեխայոց նոր շորեր կը հագցնեմ: Յետոյ էլ փողամանս ձեռքումս բռնած՝ առատ առատ կը բաժանեմ բոլոր ինձանից ողորմութիւն խնդրողներին. իսկ ես այս չափից դուրս սիրում եմ: Այս խօսքերն ասելու ժամանակ՝ ձեռքերը գրպանները դրած ուրախ ուրախ ման էր գալիս իր սիրելի ընկերի հետ:

Քույրը ծիծաղելով նորա այս երեխայական պարզութեան վրայ՝ ասաց նորան. «իսկ ինձ ի՞նչ քան փող կըտաս»:

— Քեզ ոչինչ էլ չեմ տալ, խրոխտ ձայնով դարձաւ նա, նկատելով, որ քույրը իրան վրայ էր ծիծաղում: Քեզ ինչքան հարկաւոր լինի՝ հայրիկս կըտալ: Ես կօգնեմ այնպիսի աղքատներին՝ որոնց որ հայրիկս չէ կարող օգնել:

Վահան ինչ որ տեսնում էր և սովորում՝ անշուշտ պատմում էր իր որբ ընկերին, գիտենալով, որ նա ուրիշ մի ճանապարհ չունէր մի նոր բան լսելու և սովորելու բացի իրենից:

— Գիտե՞ս, Մովսէս ջան, ինչ նոր բան եմ սովորել, դարձաւ նա ընկերին. երեկ խաղալու ժամանակ լանկարծ խաղալիքը ձեռքիցս վայր ընկաւ: Մայրիկս դարձաւ ինձ և հարցրեց. ինչո՞ւ համար, Վահան, երբ մի բան ձեռքիցդ ընկնում է՝ անպատճառ գետին է ընկնում, երբէք վեր չէ բարձրանում և երբէք դէպի պատերը չէ ձգւում: Ես շատ մտածեցի, բայց պատասխան չը կարողացայ տալ:— Որովհետեւ երկիրը ամեն առարկայ քաշում է իրան՝ ինչպէս մագնիսը քաշում է երկաթը, բացատրեց ինձ մայրիկս:

— Մագնիսը ի՞նչ է, հետաքրքրութեամբ հարցրեց Մովսէսը:

— Մագնիսը այնպիսի մի տեսակ երկաթ է, որ եթէ ուրիշ հասարակ երկաթի կտորի մօտեցնես՝ իսկոյն կը քաշէ իրեն, պատասխանեց Վահանը: Սպասիր, Մովսէս ջան, քեզ ցույց տամ իմ մագնիսս: Վահան ուրախ ուրախ վազում է և բերում իւր մագնիսը և մի ասեղ: Երկու ընկերները մեծ բաւականութեամբ սկսում են զբաղուել մագնիսով: Զարմանում են նայելով, թէ ի՞նչպէս երբ մագնիսը մօտեցնում են սեղանի վրայ դրուած ասեղին՝ իսկոյն խլում է նրան, ի՞նչպէս մագնիսը հեռուից բռնած շարժելիս՝ ասեղն էլ ինքըն իրեն շարժւում է, և այսպէս կարելի է ասեղը ման ածել ամբողջ սեղանի վրայ և նա երբէք չի կանգնի՝ մինչև որ մագնիսը չը հեռացնեն մօտից:

— Տես, Մովսէս ջան, ասաց Վահանը, ինչպէս որ այս մագնիսը ձգողական զօրութիւն ունի՝ միևնոյն տեսակ զօրութիւն ունի և երկիրը: Դորա համար ոչ մի բան չէ կարող ոչ վեր բարձրանալ և ոչ օդի մէջ կանգնել, որովհետեւ երկիրը նրան իսկոյն քաշում է իրեն: Երբ մեծանամ՝ ի՞նչքան այսպիսի զարմանալի բաներ պէտք է սովորիմ ու տեսնեմ:

Մովսէս էլ չափից դուրս գոհ էր, որ ունէր Վահանի նման ընկեր: Նա միշտ հնազանդում էր

նորան, որովհետեւ նորանից շատ ու շատ բաներ էր սովորում: Աւեն օր միմեանց հանդիպելիս նա հետաքրքրութեամբ հարցնում էր. — «նոր ի՞նչ ես սովորել»: Վահանն էլ իր պարտքն էր համարում նրան պատմել՝ եթէ մի որեւէ նոր բան էր սովորել: Մի օր էլ Վահան ուրախ-ուրախ դուրս է վազում և ընկերին հարցնում է. — Մովսէս ջան, ասա տեսնեմ, քո կարծիքով երկիրը, այսինքն այս բոլոր աշխարհը ի՞նչ ձև ունի: — Ինչ ձև որ տեսնում ենք, միայն ի հարկէ շատ մեծ է, պատասխանում է Մովսէս, առանց տարակոյսի:

— Այդպէս չէ, Մովսէս, ուզո՞ւմ ես պատմեմ, ասում է Վահանը:

— Պատմիր, պատմիր, բացազանչեց Մովսէսը:

— Տեսնո՞ւմ ես այս գնդակը. երկիրն էլ ուղիղ այս ձևն ունի: Ես էլ սկզբի անգամ երբ լսեցի՝ դարմացայ: Եւ այս ձևով երկրագունդը շարունակ պտույտ է գալիս, մի բոպէ չէ հանգստանում:

— Ի՞նչ ես ասում, Վահան, ի՞նչպէս կարող է պտույտ գալ, չէ՞ որ մենք նորա վրայ ենք և ոչինչ չենք զգում, վայր չենք ընկնում, դարմացմամբ հարցնում է Մովսէս:

— Զենք ընկնում՝ որովհետեւ երկիրը չափից դուրս արագ է պտույտ գալիս և իր ձգողական զօրութեամբ մեզ ամուր պահում է իւր վրայ: Ահա

քեզ օրինակ: Եթէ մենք բաժակը լիքը ջուր առնենք և շատ արագ շուր տանք՝ միջից մի կաթիլ ջուր չի թափուլ, նույն է և երկրագունդը: Տես, երբ մենք երկինք ենք նայում՝ մեզ այնպէս է թուում, թէ արեգակը ման է գալիս, բայց այդպէս չէ եղել: Արեգակը իր տեղից չէ շարժւում, իսկ մեզ այդպէս է թուում՝ որովհետեւ մենք ենք շարժւում:

Մովսէսը երկար ժամանակ չէ ուզում հաւատալ Վահանի այս բացատրութեան: Նայում է երկինքը և Վահանին էլ ցոյց է տալիս, ցանկանալով համոզել, որ իր բացատրութիւնը արեգակի վերաբերմամբ սխալ է:

— Համոզուիր ինձ հետ, Մովսէս, ասում է Վահան. ես էլ քեզ պէս չէի կարողանում հաւատալ. բայց ինձ օրինակ բերին երկաթուղին, և ուղիղ որ չափից դուրս նման է: Երբ երկաթուղին սաստիկ արագ սլանում է՝ մէջն եզոդին այնպէս է թուում՝ իբր թէ չորս կողմը գտնուած առարկաներն ևս իր հետ վազում են, բայց ի հարկէ այդպէս չէ: Արեգակն էլ այսպէս է երկրագնդի շարժողութեան առաջ:

— Երբ դուն գիմնազիա գնաս, ի՞նչ կրկինի դրութիւնս. այլ ևս ո՞վ կունենամ այսպիսի հետաքրքիր պատմութիւններ պատմող: Ի՞նչպէս

քեզ շուտ շուտ պէտք է լինեմ, ասում է Մովսէսը տխուր ձայնով:

— Մովսէս ջան, ես էլ շատ եմ մեղքանում քեզ և չեմ ուզում քեզանից բաժանուել: Բայց երբ որ գիմնադիպից վերադառնամ՝ ի՛նչքան բան սովորած կը լինիմ քեզ պատմելու, մխիթարում էր նրան Վահանը:

Բայց ո՞վ գիտէ, Վահան, ես այն ժամանակ մի՞թէ ազատ կըլինիմ, որ կարողանամ քեզ լսել: Ախր ես էլ մի որևէ գործ պէտք է սովորիմ, որ երբ մեծանամ կարողանամ աշխատել: Հայրս որ մեռաւ՝ մեզ ոչինչ չըթողեց բացի մի կլթան կովից, որի կաթը ծախելով՝ մայրս կառավարում էր մեզ. բայց Աստուած այդ ևս իղեց մեզանից: Յանկարծ փուլ եկաւ մեր տան տխուր, և մեզ կառավարող կովը սատկեց: Մնացինք բոլորովին առանց ապրուստի: Հիմա շատ օրեր անցնում են, որ մի կտոր չոր հաց էլ չենք ունենում ուտելու: Ե՞րբ պէտք է Մովսէսը մեծանայ, որ մենք էլ աշխատաւոր մարդ ունենանք, ասում է միշտ մայրը: Ինձ արդէն տուել են հիւանի մօտ աշակերտ. բայց չըգիտեմ մինչև վերջ այս արհեստով կըպարապիս, թէ կօշկակարի մօտ կըգնամ:

Որբ ընկերոջ աննախանձելի դրովթեան պատմովթիւնը այն աստիճան էր ներգործել Վահա-

նի վրայ, որ հազիւ կարողացաւ պատասխանել. «Ի հարկէ, որը որ մայրիկդ կըցանկայ»:

Նա տխրովթիւնից լանկարծ բոլորովին փոխուեցաւ: Նրա գեղեցիկ և գրաւիչ աչքերը յուզուեցան. վարդազոյն այտերը գունատուեցան. սիրտը տխրեցաւ: Նա գլուխը խոնարհեցրեց, ձեռքերը ծալեց ծոցում և նստելով անշարժ մնաց երկար ժամանակ: Երբեմն նայում էր սիրելի ընկերոջ տխուր երեսին, երբեմն նայում էր նորա պատառուտած հագուստին և երբեմն իր առաջ դիզուած քարէ կոյտին: Ընկերոջ տխուր աչքերի մէջ նա կարդում էր աղքատութեան լուսահատութիւն: Վահան խղճում է ընկերին: Նա զգում է եղբայրական պարտականութիւն՝ մտնել ընկերոջ կեանքի մէջ, մտածել, մի հնարք գտնել նորան օգնելու. բայց տեսնելով, որ դա իր ոյժից վեր է՝ աւելի է տխրում: Նա առանց ծնողքից իրաւունք ստանալու ոչինչ չէր կարող խոստանալ, ոչինչ չէր կարող անել: Նա ոչ մի բառ չէր գտնում իր աղքատ ընկերին մխիթարելու:

Վահանին տուն կանչեցին թէյ խմելու, և նա բաժանուեցաւ ընկերից: Սակայն նա ո՛չ կարողացաւ ուտել և ոչ խմել, այնքան խոր տպաւորովթիւն էր թողել նորա վրայ աղքատ ընկերոջ դրովթիւնը:

Գ.

Աշխատային յորդ անձրեւներից և լաճախ կըրկ-
նուող հեղեղներից Ախալցխայ քաղաքի Փոցխով
գետը ուշադրութեան արժանի տեսարան էր ներ-
կայացնում: Նորա մէջ թափուող փոքրիկ առուակ-
ները մեծանալով և փոքրիկ գետակներ կազմե-
լով աղմկալի ձայներով գալիս էին լցւում մայր
գետի մէջ: Իսկ մայր գետն էլ այդ բոլորից աւե-
լի ուժ ստանալով՝ սլանում է վիթխարի և կատա-
ղած հրէշի նման և իւր աղմկալից և անվախ գո-
ռում-գոչումով կարծես կռուելիս լինի իւր դէմ ե-
ղած բոլոր ուժերի հետ և լաղթական հպարտու-
թեամբ իւր ընթացքը շարունակում: Գետի մօտ
գտնուած բոլոր անշուք տների բնակիչները եր-
կիւղի մէջ՝ ամեն բոլե սպասում են, որ կատա-
ղած գետը իրենց տունը կըլափէ կըտանի: Իսկ
ձկնորսները օգտուելով հանգամանքից՝ սարքում
են ձկնորսական թակարդներ, առատ որսի յոյսով:

Վահան իրենց տան պատշգամբի վրայ կան-
գնած՝ նայում է այս բոլոր գրաւող տեսարան-
ներին: Յանկարծ նա տեսնում է ջրի տփին մի
ծանօթ երեխայի կերպարանք, որ շատ նմանում
էր իւր սիրելի ընկերին: Նա դիտում է ուշա-
դրութեամբ և համոզւում է, որ իր ընկեր Մով-

սէսն է: Նա արագութեամբ իջնում է պատշգամ-
բից և քալերը շտապեցնում է դէպի նա: Տես-
նում է, որ Մովսէսը փոքրիկ ձկնորսական ուռ-
կանը ձեռքին՝ աշխատում է ձուկ բռնել: Երկու
ընկերները միմեանց հանդիպելով շատ գոհ են
մնում և մեծ բաւականութիւն զգալով սկսում են
զբաղուել ձկնորսութեամբ: Սակայն դժբախտաբար
նոցա այս զուարճութիւնը երկարատեւ չ'եղաւ. ուռ-
կանը դուրս քաշելու ժամանակ Մովսէսի ոտքը
սլքուեցաւ, և նա ընկաւ ջրի մէջ: Վահանը տես-
նում է ահուելի վիշապի նման կատաղած ալիք-
ները, իսկ նրանց մէջ տեսնում է իր սիրելի որը
ընկերին, որին ալիքները դէպի ներս դէպի խորն
են քաշում շարունակ: Վահանը ազազակում է
օգնութիւն, վազում է այս կողմ, վազում է այն
կողմ, սակայն ոչ մի մարդու հետք չէ երեւում:
Վահանը տեսնում է, որ անբախտ ընկերը, որչափ
աշխատում էր դիմադրել ալիքներին՝ չէր կարո-
ղանում. տեսնում է, որ նա ազատուելու ճար
չունի: Յուսահատական բոլեում նա վերջապէս
ինքն իրան ջուրն է նետում՝ ընկերին ազատելու
նպատակով, առանց մտածելու, որ ինքն էլ նոյա
նման մի անգոր երեխայ է և բոլորովին լողալ չը
գիտէ: Ընկերները աշխատում են միմեանց մօտե-
նալ, միմեանց գրկել. սակայն ահաբեւ գետը նա-

ցա տկար ուժը ծաղրելով՝ խաղալիք է դարձնում նրանց իւր ալիքներին:

Բարեբախտաբար այդ ժամանակ մի մարդ գալիս է ջուր տանելու: Տեսնում է ջրի մակերևութին երկու երեխայ, որոնք հետզհետե խորասուզւում են ջրի տակ և բարձրանում մէկը միւսի ետեւից: Նա իսկույն օգնութիւն է կանչում, աղաղակում. նրա ձայնը լսում են մարդիկ և շտապում են գետի ափը:

Իսկույն ընկնում են ջուրը և չաջողւում են երկուսին էլ ազատել:

Սեպտեմբերի տասնևեօթն էր, Ս. Խաչի տօնի օրը: Այդ օրը բոլորն էլ պատրաստւում էին եկեղեցի գնալու: Վահանին նույնպէս խոստացել էր մալը, որ քուրերի հետ միասին եկեղեցի պիտի տանէր: Բայց Վահանը լանկարծ անհետանում է: Մալը չէ կարող հասկանալ, թէ նա ո՛ւր պէտք է գնացած լինի առանց իր իրաւունքին: Նա յուսահատ նայում է բոլոր կողմերը, թէ ո՛րտեղից պէտք է լալտնուի Վահանը: Շատ ժամանակ չէ անցնում. Վահանին բերում են տուն, և եղելութիւնը պատմում են ծնողաց: Իսկույն բժիշկների օգնութեան են դիմում. Վահանը իրեն առողջ է զգում, միայն նկատում է, որ թույ է և մօր խորհրդով պառկում է անկողնում:

Գիշերը մօտենում է: Հորիզոնից գեղեցկադէմ երեսը ցույց է տալիս պայծառ լուսինը և իր ճառագայթները տարածելով երկրիս վրայ՝ լուսաւորում է նրան իր աղօտ լոյսով և հպարտ հպարտ նայելով վերեւից և տեսնելով տիեզերքի այնչափ լուսաւորութիւնը և նրա սիրուն կերպարանքը, կարծես ասել է ուզում. «Ո՛վ երկիր, եթէ դու այժմս այդպիսի հրապուրիչ և գեղեցիկ կերպարանք ես ստացել՝ դուրս միակ պատճառը ես եմ, ես: Եթէ ես այժմս չըլինիմ, քեզ կըպատէ թանձր խաւար»: Խաղաղ էր երկինքը, խաղաղ էր երկիրը: Քաղաքի բնակիչները դուրս էին եկել՝ զով եղանակին լուսնկայ գիշերն զբօսնելու: Նոքա էլ ուրախ էին և խաղաղ:

Միայն Վահանի տան մէջ խաղաղութիւնը վրդովուել էր լանկարծակի, որովհետեւ երեկոյեան դէմ Վահանի դրութիւնը սաստիկ վատացել էր: Նա օգնութիւն է կանչում.— «Հայրիկ ջան, շուտ բժիշկ բեր, օգնեցէք, ես մեռնում եմ»: Այս լանկարծական փոփոխութիւնից համարեա թէ ցնորւում են տան բոլոր անդամները, իրենք էլ չը գիտեն ինչ են անում: Մինը վազում է բժիշկների ետեւից, իսկ միւսը դեղի: Վահանը իր երեխայական պարզ խելքով գուշակում է, որ իր հիւանդութիւնը թեթեւ չէ և սպառնում է իրեն վնաս

սել, բայց չըջապատողներից ոչ ոք այդ չէր հասկանում և չէր հաւատում. մինչև անգամ բժիշկները միամտացնում էին բոլորին, թէ հարկաւոր չէ յուսահատուել, ոչինչ չըկայ, իսկ հիւանդի հետ կատակներ էին անում, որոնցից նա աւելի էր նեղանում, կրկնելով. «Նա իրենցից բժշկութիւն եմ խնդրում, և ոչ թէ զուարճութիւն»:

Քանի գնում է՝ Վահանի դրութիւնը աւելի վտանգաւոր է դառնում, չընայելով որ ամենայն ճշդութեամբ կատարւում էին բժիշկների բոլոր պատուէրները:

Վահան պարզապէս զգում է, որ վաղահաս մահուամբ թողնելու է այս աշխարհը, իր սիրելի ծնողաց և վերջապէս իր ունեցած բոլոր սիրելի առարկաները: Վահանի այս նախազգացումը նրա կատուում էր կարծես նրա յուսահատուած նախացքից և սրտաճմլիկ խօսքերից, որ նա ուղղում էր իր մօտ կանգնած վշտալի և յուսահատուած մօրը:

Ո՛հ դառն և անտանելի բոլէ: Վահանը աչքերը դէպի մայրը դարձրած՝ օգնութիւն է խընդրում: Աղերսում է, աղաչում է օգնել իրեն, ազատել իրեն: Նա պարզ յայտնում է, որ եթէ շուտափոյթ օգնութիւն չըլինի՝ նա կըմեռնի:

Իսկ անբախտ և վշտացած մայրը ձեռքերը ծալած՝ կանգնած է նրա մահճի մօտ. յուսահա-

տութիւնից կարծես մի քարէ արձան էր դարձել: Այլ ևս օգնութեան ոչ մի միջոց չէր մնացել. երեխայի պաղատանքներին նա պատասխան անգամ չէր կարողանում տալ: Նա չէր կարողանում իրեն բացատրել ու հասկանալ, թէ լանկարծ ի՞նչ պատահեցաւ իր սիրելի որդուն: Նա չէր կարող հաւատալ, որ մահը այնքան անգույթ կըլինի, որ կըխլէ իր գրկից իր անթառամ Վահանին:

Նա բժիշկների օգնութիւնից յուսը կտրած՝ իր սիրելի երեխայի փրկութիւնն Աստուծուց էր սպասում: Բայց, աւա՛ղ, Աստուած ևս խնայեց իր օգնութիւնը: Վահանը վերջի ճգնաժամում էր: Նա անընդհատ խօսում էր և իր վերջին հրաժեշտն էր տալիս բոլորին: Նա այս անտանելի բոլէին անգամ չէր մոռանում իր դասերը. մոտատանջւում էր, որ դեռ չէր սլատրաստել:

Գրիչը զուրկ է այն ուժից, որ կարողանայ նկարագրել Վահանի վերջին բոլէները: Նրա երակները այլ ևս չէին բաբախում, բայց քաղցրախօս լեզուն շարունակ խօսում էր: Նա ամենայն յօժարութեամբ առանց փոքրիկ տրտունջ լալանելու՝ համբերում էր իր մօտ լաճախող հինգ բժիշկների գործ դրած փոփոխական միջոցներին և նոցա պատճառած ամենայն տեսակ դժուար չարաշարանքներին: Առանց դժուարութեան խմում էր

ամենայն տեսակ դառն դեղեր, միայն թէ իրեն
օգնութիւն լինէր: Նա շատ ու շատ թանկ էր
գնահատում իր կեանքը և իր սիրելի ծնողաց
գգուանքը: Բժիշկները մինչև անգամ զարմանում
էին նրա այս տեսակ խելացի համբերութեան վը-
րայ: Վահանը առաջ որչափ խելացի երեխայ էր՝
հիւանդութեան ժամանակ այնքան կրկնապատիկ
աւելի խելացի երևեցաւ: Կարծես մի գերբնական
զօրութիւն էր մտել նորա մէջ: Նա այնպիսի խօս-
քեր էր ասում, այնպիսի կարծիքներ յայտնում,
որ ոչ թէ երեխայից, այլ աւելի հասակաւոր մար-
դուց էլ չէր կարելի սպասել: Շրջապատողները
զարմանում էին, թէ նա ո՞րտեղից է սովորել այն
խօսքերը, որ առաջ չըգիտէր: Բժիշկները սրտանց
ուզում էին և աշխատում էին օգնել: Գործ էին
դնում իրենց բժշկական միջոցները, բայց բոլորը
ի գուր էին անցնում:

Վահանի դրութիւնը աւելի և աւելի վատանում
էր: Նա իրեն երբեմն զգում էր օտարի ձեռքում
և աշխատում էր ազատուել. երբեմն զգում էր
իրան հրդեհի մէջ և աղաչում էր, որ փրկեն իրեն.
երբեմն էլ վշտացած մաքառում էր իր հոգէառ
թշնամու դէմ: Նա յուսահատ և վշտացած, դար-
ձաւ կրկին անգամ դէպի իր դժբախտ և անմը-
խիթար մայրը, նստում էր զարմացմամբ նորա ե-

րեսին և զարմանում էր, թէ ինչո՞ւ այնչափ ան-
գութ էր դարձել, որ իրան ոչինչ օգնութիւն չէր
տալիս:

— Մայրիկ ջան, չէ՞ որ դու ինձ ա'յնչափ սի-
րում ես, որ ամեն մի չնչին դէպքի պատճառ-
ով անհանգիստ էիր լինում և խկոյն օգնում
էիր ինձ. բայց ինչո՞ւ հիմա չես օգնում: Մայրիկ
ջան, իմ անուշ մայրիկ ջան, առաջ մի երկու
ժամ չէինք կարող միմեանցից բաժանուել. իսկ
այժմս չաւիտեան պիտի բաժանուիմ քեզանից, և
դու չե՞ս օգնում ինձ: — Խեղճ, անբախտ երեխային
դժուար էր հասկանալ, թէ իր վշտացած մօր սիր-
տը ինչպէս տակն ու վրայ էր լինում: Նա չէր
կարողանում հասկանալ, որ մայրը պատրաստ էր
իր ամբողջ կեանքը ուրախութեամբ զոհելու, միայն
թէ կարողանար գէթ մի փոքրիկ օգնութիւն
հասցնել իր զաւակին:

Վահան պինդ բռնել է իր սիրելի մօր ձեռ-
քը, բոլոր ուժով քաշում է իր հետ տանել. իսկ
բոլոր շրջապատողները աշխատում են անմխիթար
մօրը իր սիրելի զաւակից բաժանելու:

— Վահան ջան, հոգիս, հանգստացիր, ես ոչ
ոքին չեմ թողնիլ, որ քեզ տանեն: Մի՞թէ չըգի-
տես, որ ես առանց քեզ չեմ կարող ապրել:

— Մայրիկ ջան, ինձ շատ են շտապեցնում,

ո՞րտեղ են իմ շորերս, իմ նոր կրկնակօշիկներս:
Ահա մէկը, իսկ միւսը ո՞րտեղ է: Մայրիկ եթէ
հետս չես ուզում գալ՝ գոնեա չետոյ եկ, շուտ եկ:

Թշուառ մայրը ստիպուած էր դուրս գալ հի-
ւանդի մօտից: Նա ալ ևս անկարող էր զսպել
իրան և անտարբեր կանգնել իրանից բաժանուող
սիրեցեալ որդու մահճի մօտ:

Ոչ մի զգայուն սիրտ չէ կարող անտարբեր
մնալ՝ տեսնելով մարդու այս վերջին ընկերները:
Մինչև անգամ բժիշկները արտասուում էին, տես-
նելով երեխայի չարչարանքը:

Վահանը չիշում է հեռաւոր բարեկամներին:
Յիշում է իր սիրելի մօրաքոյրներին, ափսոսում է,
որ այն ընկերներն այնտեղ չեն: Յիշում է իր սիրե-
լի որդի ընկեր Մովսէսին, որի երգելու ձայնը
այժմ իրան անհանգստացնում է. խնդրում է,
որ Մովսէս երգը դադարեցնէ:

Նորա քնքոյլ և փափուկ անդամները ար-
դէն սկսել էին սառել, բայց խօսուածքը և նայ-
ուածքը դարձեալ խելացի էին:

Բայր միջոցները անօգուտ մնացին: Ի վուր
անց կացաւ բժիշկների աշխատանքը: Ի վուր անց
կացաւ ծնողաց խնամքը ու գգուանքը: Անմեղ
երեխային վիճակուած էր մահ, իսկ անբախտ
ծնողաց չափտենական սուգ ու ողբ:

Վահանը վերջին անգամ իր շուրջը նայեց:
Այո՛, ալդ նայեացքը նորա վերջին նայեացքն էր:
Ալդ նայեացքով հրաժեշտ տուեց բոլորին: Ալդ
նայեացքով նա արտայայտեց, որ բոլոր աշխար-
հային զուարճութիւններից չըկտացած, ծնողաց
փափագը չ'առած և իւր ցանկութիւնները անկա-
տար թողած՝ չաւիտեան հեռանում է աշխարհից:

Մօտ ութ տարի շարունակ գործող սրտի
բաբախումը չաւիտեան կանգնեցաւ: Յաւիտեան
դադարեցաւ նորա քաղցրախօս լեզուն: Յաւի-
տեան գոցուեցան նորա գեղեցիկ աչքերը:

Աննկարագրելի դառն և դժուար ընկեր է
դեցու զանգակի տխուր զօղանջիւնը տարածում է
Վահանի ծաղիկ հասակում վազահաս մահուան
լուրը: Լսողը ափսոսում է և խղճում: Ծնողքը
վերջի հրաժեշտ են տալիս իրանց անչափ սիրած
զաւակին: Անգութ մարդիկ շտապում են ընկեր
առաջ մօր գրկից խլելու իւր սիրելի որդու ան-
գին դիակը:

Քեզ տարան մարդիկ, անգին որդեակ իմ
Վահան. քեզ բաժանեցին քո սիրելի մօրից:
Բայց մարդկանց ինչո՞ւ մեղադրենք. Աստուած
քեզ տարաւ Իւր մօտ: Խնդրիր Աստուծուց, իմ

անմեղ հրեշտակ, որ քո դժբախտ մօրդ էլ շուտով հանէ այս ցաւալի աշխարհից, շուտով քո տեսութեան արժանացնէ:

Մեր սգալից օրերը այստեղ քո լիշատակով ենք լեցնում, քո անունը միշտ կրկնում: Քո սիրելի ընկեր Մովսէսը քեզ չէ մոռանում: Նա քո ընկերութիւնը երբէք չէ կարող մոռանալ, որ նորա կեանքը ազատելու համար՝ դու մաքառեցիր նորան սպառնացող, գազանի նման կատաղած և փրփրած ալիքների դէմ: Երբէք չէ կարող մոռանալ, որ դու քո թանկագին կեանքդ նուիրեցիր նորան, և նա այժմս գերեզմանիդ վրայ մոմեր վառելով առնում է իւր կարօտը, կատարում է իւր պարտականութիւնը դէպի իւր անմուտ նալի անձնազոհ ընկեր Վահանը:

3389

82840000

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0007828

